ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 87

ք. Երևան 16.10.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մոդեմների, լազերային տպիչների, գունավոր տեսամոնիտորների, խոսափողների-բարձրախոսների հավաքածուների և մետաղի դետեկտորների ձեռքբերման նպատակով կազմակերպվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/11» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԼԵԴԱՐՄ» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 00517511, գործունեության հասցե՝ ՀՀ ք.Երևան, Ֆրունզե 13 (այսուհետ՝ Մասնակից):

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված ժամկետում՝ էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

06.10.2023թ. կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ «ԼԵԴԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից, օրենքով սահմանված ժամկետում, Պատվիրատուին չի ներկայացվել իր կողմից կնքված պայմանագիրը և այդ պայմանագրի որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և ընթացակարգի հրավերի 9.5 կետերի պահանջները՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հաշվի առնելով, որ «ԼԵԴԱՐՄ» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝ «ԼԵԴԱՐՄ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ